

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան պ. Ցարութիւն Պապովեանի անունով՝ ինքնաբերաբար և սիրայօժար կամքով դպրոցական ֆոնդի օգտին նուիրաբերած տասն հազար (10,000) ռուբլու մասին։ 3 մայիսի, թ. 679։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Աթոռի տպարանի վարչութեան ուղարկել, այս տարուայ յունուարից սկսած, Կիլիկիայի Հայոց ճեմարանի անունով մի օրինակ «Արարատ»։ 10 մայիսի, թ. 701։

Դիւանի շրջաբերական գրութիւններով յանձնարարուեց Ռուսահայոց բոլոր թեմական առաջնորդներին՝ պատուիրելու իրենց ատորագրեալ կոնսիստորիաներին, որ երբ պսակի թոյլտուութեան առթիւ դիմեն Նորին Սրբութեան, միջնորդական յայտարարութիւնների մէջ պարզ և մէկին յիշատակեն, թէ պսակուողների մէջ ինչ աստիճանի չհասութիւն կամ արգելք կայ, որպէս զի Նորից աւելորդ գրագրութիւն տեղի չունենայ այդ առթիւ։ 14 մայիսի, թ. թ. 723—728։

Նորին Սրբութիւնը ս. Էջմիածնի Սինոդի այս տարուայ յունուարի 15-ի թ. 39 յայտարարութեան վրայ հետևեալն է մակագրել. «Օրհնելով Կոմերցի Սովետնիկ պ. Արշակ Ղուկասեանին և նորա ծախքով նոր կառուցանելի յանուն ս. Հռիփսիմեայ եկեղեցւոյ գործը, թոյլ ենք տալիս նոյն եկեղեցւոյ զանգակատան տակ իրենց ապագայ ննջեցեալների թաղելու համար ժամանակին շինել դամբարան և պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինոդին տալ օրինական ընթացք սոյն եկեղեցւոյ շինութեան գործին»։ 14 մայիսի, թ. 730։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով ուղարկելով հանգուցեալ Աւետիք Բալայեան Ղուկասեանի կտակած 502,629 ռուբլի 62 կոպ. արժէթղթերն ու գրքոյկները՝ առաջադրուեց նախ՝ առանձին հաշիւ բանալ տոկոսաբեր թղթերի և մուրհակների համար և մանրամասնաբար արձանագրել այդ արժէթղթերը համապատասխան մատեանում. երկրորդ՝ ստանալ ամենայն կանոնաւորութեամբ դրամի տոկոսները և կալուածի վարձը. երրորդ՝ կարգադրել փոխադրել բոլոր դրամն Պետական բանկի Երևանի բաժանմունքը, որպէսզի տոկոսների ստանալը դիւրին լինի. չորրորդ՝ կարևոր փաստաթղթերը և վաւերագրերը Սինոդի պատասխանատուութեամբ պահել Մայր Աթոռի գանձարանում. հինգերորդ՝ աշխատել փաստաբանի միջոցով ստանալ պարտատէրերից դրամները և վեցերորդ. այս բոլոր գործողութեան մասին յայտնել Կ. Պոլսի Հայոց Ամենապատիւ Տ. Պատրիարքին ի գիտութիւն. իսկ դրամագլխի տոկոսների և կալուածի եկամտի գործադրութեան մասին՝ կտակի տրամադրութեան համաձայն, Կ. Պոլսոյ Պատրիարքի հետ բանակցութիւն կսկսուի Վեհափառ Կաթուղիկոսի կողմից։ 14 մայիսի, թ. 735։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի Լուսարարապետ Տ. Ղևոնդ եպիսկոպոսին, Սինոդի անցած ապրիլի 28-ի օրագրական որոշման համաձայն, ձեռնադրել Ղարաբաղի թեմի Մարդակերտ գիւ-

դացի Սեղրաք Տէր Յովհաննիսեանին քահանայ։ 19 մայիսի, թ. 737։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինոդին կարգադրել, որ էլեքտրական ճրագները վառուին վանքի, վեհարանի և ճեմարանի բակերում մինչև առաւօտ։ 23 մայիսի, թ. 746։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինոդին կարգադրել վճարել Տ. Մատթէոս եպիսկոպոսին հանգուցեալ Աւետիք Բ. Ղուկասեանի կտակագումարի տոկոսներից, որպիսի գործի առթիւ նա գնացել էր Տփխիս, չորս հարիւր քառասուն և հինգ ռուբ. 1 կոպ. (445 ռ. 01 կ.) նորա արած ծախքը։ 23 մայիսի, թ. 749։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Աթոռի ընդհանուր կալուածոց կառավարիչ Լևոն Տ. Աւետիքեանին Աւետիք Բ. Ղուկասեանի տան նորոգութեան նախահաշիւ ներկայացնել Նորին Ս. Օծութեան։ 23 մայիսի, թ. 757։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Խարբերդի Հայոց Առաջնորդին մանրամասն վիճակագրական տեղեկագիր ներկայացնել Նորին Սրբութեան իւր թեմի մասին։ 23 մայիսի, թ. 762։

Կոնդակ օրհնութեան երաժիշտ Նիկողայոս Տիգրանեանի անունով՝ նորա 25-ամեայ յոբելեանի առթիւ։ 24 մայիսի, թ. 772։

Կոնդակ օրհնութեան Թաւրիզի Լիլաւայի «Հայկազեան-Թամարեան» դպրոցի Յոբելենական Ցանձնաժողովի անունով՝ դպրոցի 40-ամեայ յոբելեանի կատարման առթիւ։ 30 մայիսի, թ. 797։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով ուղարկելով Կովկասի Փոխարքայի Սգնականի գրութեան պատճէնը՝ Շամախու Հայոց թեմի առաջնորդ Տ. Անանիա արքեպիսկոպոսի արձակման և Տ. Կարապետ եպիսկոպոսի նոյն պաշտօնում հաստատելու մասին՝ առաջադրուեց անհրաժեշտ կարգադրութիւն անել։ 31 մայիսի, թ. 799։

Կոնդակ ընդհանրական Շամախու վիճակի հոգևորական դասի, հոգաբարձութեանց, երեսփոխանների, վաճառականների և այլ դասակարգի անունով, որով յայտնելով եպիսկոպոսի թեմի առաջնորդ կարգուելը՝ յորդորուեց, որ աջակցութիւն ցոյց տան նորան, որպէս զի կարողանայ կատարել իւր վրայ դրած պարտականութիւնները։ 31 մայիսի, թ. 800։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Կոնդակ Ռումինիայի Կոնստանցա քաղաքի Ներսէս քահանայ Առաքելեանի անունով, որով, հոգևոր հովիւ Տ. Գնել եպիսկոպոսի միջնորդութեան համաձայն, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 14 մայիսի, թ. 710։

Կոնդակ Տփխիսի Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցու միաբան Ղևոնդ քահանայ Մամիկոնեանի անունով, որով, Տփխիսի Առաջնորդի միջնորդութեան համաձայն, աւագ քահանայութեան պատիւ շնորհուեց։ 14 մայիսի, թ. 711։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Սինօդը՝ լսելով Ղարաբաղի կոնսիստորիայի անցած տարուայ նոյեմբերի 27-ի, № 3763 յայտարարութիւնը՝ ուսուցիչ Արտաշէս Տէր-Յովսէփեանին Կախ-Աւանի վրայ հեռացած Մելքիսեդեկ քնյ. Այդրեանի փոխարէն քնյ. ձեռնադրելու մասին, որոշեց. մերժել կոնսիստորիայի միջնորդութիւնը Արտաշէս Տ. Յովսէփեանին Կախ-Աւանի վրայ քնյ. ձեռնադրելու մասին և պատուիրել կարգադրել, որ Սղրեան քահանան մնայ Կախ-Աւանում և հովուէ այդ տեղի իւր ծխականներին։ 10 մայիսի, թ. 193։

Սինօդը՝ քննութեան առնելով Աղէքսանդրոպոլի Ղևոնդ քնյ. Մատնիշեանի, գաւառի Ղազանչի գիւղի Մկրտիչ քնյ. Թևանեանի, Փոքր-Պարնի գիւղի Ներսէս քնյ. Թորոսեանի և